ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՂԱ/09-2025
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

8 ապրիլի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետի աշխատակազմի ղեկավար (խորհրդի նախագահ)	Ա. Հարությունյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝

Վարչապետի խորհրդական	Ա. Թումանյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Կարապետյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Դ. Դանիելյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Վ. Կոստանյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ	Վ. Ասցատրյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ	Ն. Գույյան
«Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Գասպարյան
«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Միխայլով
Հայաստանի «Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության նախագահ	Ի. Պողոսյան
Երևանի «Պոնտի» հունական հասարակական կազմակերպության նախագահ	Է. Միխաիլով
Հայաստանի « Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» հասարակական կազմակերպության անդամ	Մ. Սիմոնյան
«Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Մ. Լազարևա
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Նամաչևաձե
«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ն. Սպանդերաշվիլի
«Մենորա» հրեական մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վայներ
«Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության նախագահ	Ռ. Վարժապետյան
«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ	Ս. Ավդալյան
«Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Խ. Հաջոյան
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ	Կ. Հասանով

«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Վուխրեր
«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպության անդամ	Մ. Մինասյան
Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ	Ի. Կոնցևիչ
Հայաստանի Հանրապետության «Ռոսիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ե. Հակոբյան
«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն հասարակական կազմակերպության անդամ	Ա. Հարությունյան
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության անդամ	Ա. Մինասյան
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Հարությունյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության մոնիթորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի պետ	Ս. Մարգարյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ	Լ. Գրիգորյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության գլխավոր մասնագետ	Մ. Վարդանյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեի լեզվական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Հովնանյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ	Ռ. Ղլեչյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ	Ա. Բարսեղյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչության գլխավոր մասնագետ	Տ. Սուքիասյան
Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի փորձագետ	Ջ. Հակոբյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Նիստը նախագահողի կողմից առաջարկվեց հաստատել խորհրդի նիստի օրակարգը:

Որոշվեց՝ հաստատել օրակարգը

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ ՀՀ փոքրամասնությունների լեզուների մասնագետների՝ դասախոսների և ուսուցիչների պատրաստման համակարգ ձևավորելու մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին՝ առաջարկելով՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ ներկայացնել ՀՀ այն բնակավայրերի ցանկը, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թիվը կհամարվի բավարար և այն կարդարացնի պետության կողմից իրականացվող պաշտպանողական և աջակցող միջոցների կիրառումը, այդ թվում՝ հանրակրթական հաստատություններում նրանց լեզուների դասավանդման կազմակերպումը:

2) Արդարադատության նախարարությանը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված հիշյալ տվյալների հիման վրա «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծում սահմանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նվազագույն շեմը՝ ընդհանուր բնակչության թվի համեմատ, որը բավարար կհամարվի պետության կողմից իրականացվող պաշտպանողական և աջակցող միջոցների, այդ թվում՝ հանրակրթական հաստատություններում ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդման կազմակերպման համար:

Օրակարգային 2-րդ հարց՝ ՀՀ փոքրամասնությունների լեզուների (ասորերեն, եզդիերեն, հունարեն, ռուսերեն և քրդերեն) թարգմանչական կենտրոն ձևավորելու մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հանել օրակարգից՝ հարցը խորհրդի հաջորդ նիստում պատշաճ կերպով ներկայացնելու համար:

Օրակարգային 3-րդ հարց՝ Ազգային փոքրամասնությունների երեխաներին ամեն տարի կազմակերպվող ամառային ճամբարների կազմակերպման պետական ծրագրում ներառելու մասին

Զեկուցող՝ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասցատրյան

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին՝ առաջարկելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

1) դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման միջգերատեսչական հանձնաժողովում քննարկել ամառային ճամբարների կազմակերպման պետական ծրագրին ազգային փոքրամասնությունների երեխաների մասնակցության հարցը և ընթացիկ տարում Վարչապետի համապատասխան որոշման մեջ ընդհանուր 3200 տեղերից 100-ը նախատեսել ազգային փոքրամասնությունների երեխաների համար.

2) ազգային փոքրամասնությունների երեխաների խմբերը ձևավորելիս յուրաքանչյուրում ներգրավել նաև որոշակի թվով հայ երեխաներ՝ ճանաչողական և մշակութային փոխհարստացման նպատակով:

1. Քննարկման ընթացքում Վարչապետի աշխատակազմի ղեկավար, խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանի կողմից տրվեցին նաև հետևյալ հանձնարարականները՝

1) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ ազգային փոքրամասնությունների համայնքներում իրականացնել իրազեկման աշխատանքներ դպրոցներում իրենց մայրենի լեզուն սովորելու իրավունքի վերաբերյալ:
2) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետին՝
2.1. 2-3 ամսվա ընթացքում՝ մինչև խորհրդի հաջորդ նիստը, ներկայացնել տեղեկատվություն լեզուների (ասորերեն, եզդիերեն, հունարեն, ռուսերեն և քրդերեն) մասնագետների պատրաստման ձևաչափերի և ծրագրերի վերաբերյալ.
2.2. ուսումնասիրել լեզուների ուսուցման այն կենտրոնները, որոնց միջոցով լեզուների ուսուցումը հնարավոր կլինի կազմակերպել հեռավար:
3) Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետին՝ այսուհետ ներկայացվող հարցերին զուգահեռ խորհրդի նիստի բոլոր մանակիցներին տրամադրել նաև դրանց վերաբերյալ տեղեկանք:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ